## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԵԱ-ԳՀԾՁԲ-25/79 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **02 դեկտեմբերի 2025թ.**

2025թ. նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 02-ը ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայության ձեռքբերման ԵԱ-ԳՀԾՁԲ-25/79 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ն. Սուքիասյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ, |
| Վ. Սանթրոսյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի գլխավոր ֆինանսիստ, |
| Խ. Մալոյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շահագործման բաժնի պետ, |
| Ա. Գալստյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տեխնիկական բաժնի պետ, |
| Ս. Ավագյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի ավագ հաշվապահ, գլխավոր հաշվապահի պ/կ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Սուքիասյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին Հավելվածով Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և իրավերի պայմաններին համապատասխանության մասին:
4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

5. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. նոյեմբերի 26-ին, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում ժամը 17:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված հետևյալ տեղեկատվությունը․

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Միավոր գների հանրագումարը (ՀՀ դրամ) | Գնման հայտով սահմանված գնման առավելագույն գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| 1-ին | Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություն | 16,763,000.00 | 45,000,000.00 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Մուլտի Մոթորս» ՍՊԸ | ՀՀ, Կոտայքի մ., գ.Առինջ, Երևան-Սևան մայրուղու աջակողմյան հատված | 010209983, 099411431 | info@multimotors.am | 02589075 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված հայտում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ «Մոլտի Մոթորս» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1-ով ներկայացվող «ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» փաստաթուղթը հաստատված չէ էլեկտրոնային-թվային ստորագրությամբ, միաժամանակ Հավելված 2-ով ներկայացված «Գնային առաջարկի» հաշվարկը սխալ է կատարված՝ մասնավորապես, «Արժեք» դաշտում նշված «13,969,166.00» արժեքի փաստացի ստացվող «ԱԱՀ»-ն կազմում է «2,793,833.20», սակայն մասնակցի կողից «ԱԱՀ» դաշտում նշված է «2,793,834.00», ինչպես նաև հայտով ներկայացված հայտի ապահովման անդորրագրում Ընթացակարգի ծածկագիր է նշված «ԵԱ-ԳՀՉԲ-25/79», մինչդեռ սույն գնման ընթացակարգի ծածկագիրն է «ԵԱ-ԳՀԾՁԲ-25/79»:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Միավոր գների հանրագումարը | Գնման հայտով սահմանված գնման առավելագույն գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1-ին | Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություն | «Մոլտի Մոթորս» ՍՊԸ | 16,763,000.00 | 45,000,000.00 | 13,969,166.00 | 2,793,834.00 | 16,763,000.00 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2025թ. դեկտեմբերի 02-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Հիմք ընդունելով Կարգի 67-րդ կետը՝ Պաշտոնական աղբյուրների միջոցով չստուգել մասնակցի կողմից համապատասխանելու վերաբերյալ հայտով ներկայացված հավաստման իսկությունը՝ պատճառաբանված որոշման բացակայության հիմքով:

3. «Մուլտի Մոթորս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար, հիմք ընդունելով հրավերի 8.2 կետը:

4. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

5. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «Մուլտի Մոթորս» ՍՊԸ | անբավարար |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2025թ. դեկտեմբերի 02-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատված:

3. Հաստատել Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ն. Սուքիասյան ______________

*Հանձնաժողովի անդամներ*

Վ. Սանթուրյան ______________

Խ. Մալոյան ______________

Ա. Գալստյան ______________

Ս. Ավագյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Լ. Հայրապետյան ______________